ԼՈՒՍՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտի հայցորդ
ՀՏԴ 37.0

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԵՎ ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. Խաչատուր Աբովյան, մանկավարժ, «Պատմություն Տիգրանի», վեպ, դասագիրք, Հակոբ Պարոնյան, դպրոց, մամուլ:

Ключевые слова и выражения: Хачатур Абовян, педагог, "История Тиграна", роман, учебник, Акоп Паронян, школа, пресс.

Key words and expressions: Khachatur Abovyan, pedagogue, "History of Tigran ", novel, textbook, Hakob Paronyan, school, press.

Հայոց նորահաս երիտասարդների ապագային անմնացորդ հավատացող ու մշտամնա մանկավարժ Խ. Աբովյանի (1809-1848) անունը հայտնի է գրեթե յուրաքանչյուրիս: Իր ձգտման վեհագույն նպատակը համարելով երեխաների կրթությունն ու դաստիարակությունը՝ միաժամանակ այդ գործի անձնուրաց նվիրյալն ու նոր մանկավարժության հիմնադիրն է հայերիս մոտ:

Լինելով հայ ժողովրդի հարազատ զավակը՝ նա իր ամբողջ կյանքը նվիրում է ազգի լուսավորությանը: Աբովյանն որպես մանկավարժ անդրադրձել է ուսուցման գործընթացի տեսական և գործնական խնդիրներին՝ արժևորելով զննականության, գիտակցականության, մատչելիության և հաջորդականության սկզբունքները: Նա սկզբնապես գիտակցեց, որ ուսուցիչն ինքը պետք է դաստիարակված լինի, և չտեսնված համառությամբ ու փութաջանորեն հետամուտ եղավ իր կրթության գործին:

Հանուն իր ժողովրդի և նրա մանուկների ջերմ սիրո, նա սկսում է լեզուների մասին իր ունեցած հայցքները գործնականի վերածել, պայքարելով և անհաղթահարելի դժվարություններ հաղթահարելով: Խ. Աբովյանի մանկավարժա-կան հայացքների վերաբերյալ ամբողջական պատկերացում ստանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ոչ միայն նրա հիմնական մանկավարժական, ուսումնա-դաստիարակչական անմահ աշխատությունները, այլև ընդհանուր առմամբ վերջինիս թողած վիթխարի գրական ժառանգությունը:

Ամենից առաջ հիշատակենք Աբովյանի մանկավարժական գործունեությանը վերաբերող ստեղծագործությունների, վերջինիս կազմած դասագրքերի, ձեռնարկնե-րի անվանաշարքը

- Նախաշավիղ կրթության ի պետս նորավարժից
- Պատմություն Տիգրանի
- Ամերիկու լիս քցիլը
- Պատմություն հին դարուց
- Նոր տեսական և գործնական քերականություն ռուսաց վասն հայոց
- Առաջին քերականական գիրք ընթերցանութեան ռուսաց նոր գիրք ընթեցանուեան ռուսաց վասն հայոց
- Վասն մտավարժություն մանկանց
- Դիտողություններ նոր հայերեն լեզվի տարրական գրքի նպատակների մասին
- Ընդհանուր դիտողություններ
- Краткие правила для словесного употребления языка тюрки (татарского)

Կրթության բովանդակությունը մանկավարժական գործունեության հիմքն է: Մարդկության գալիք սերունդը այժմ նստած է աշակերտական նստարանին, նա դեռ անխարդախ ու աննենգ է: Նա ամբողջությամբ մեր չափահաս ձեռքերի մեջ է: Աբովյանի մեծությունը նկատելի է հատկապես կրթության գործի բարելավման ուղղությամբ հավանության ու համաձայնության արժանի խորիմաստ դատողություններն ընտանիքի ու ուսուցչի դաստիարակչական նշանակալի դերի, դաստիարակության խնդիրների, դասավանդման մեթոդների, աշակերտների անհատական առանձնահատկությունները հաշվի առնելու, համակողմանի և ներդաշնակ զարգացած ապագա քաղաքացի դաստիարակելու, ծնողների սեփական օրինակի հարցերի շուրջ:

Մանկավարժական առօրյա պրակտիկայում Աբովյանի գրչի փափագը՝ «հայոց դեռատի մանուկներին» դեպի լուսավորություն առաջնորդելն է: Ճշմարիտ մանկավարժ լինելու նախապայմանը միայն տեսական անհրաժեշտ գիտելիքների պաշարը չէ, այլ անսահման սերն ու նվիրվածությունը դեպի երեխաներն ու մանկավարժական աշխատանքը:

Աշխարհաբարի հաղթանակը, որի հաստատուն հիմքը դրեց անմահ Աբովյանը, ապահովեց հայ ժողովրդի կուլտուրայի, արվեստի, գիտության և կրթության գործի հետագա արագ զարգացումը: Միայն հենց այս

հանգամանքը բավական է, որ Աբովյանի[1] անունը անմահ մնա հայ ժողովրդի սրտում:

Ինչպես հայտնի է, 1843 թ. հուլիսի սկզբներից Աբովյանը հրաժեշտ է տալիս Թիֆլիսի գավառական դպրոցի տեսչի և ուսուցչի պաշտոնավարությանը և իր կամքով տեղափոխվում է Երևանի գավառական դպրոց: Կարելի է անվերապահորեն մտածել, որ ժամանակը անկարող է ստվերել մեծ մանկավարժի ցայսօր հնչող մանկավարժական հայացքների արդիականությունը:

Մեծ լուսավորիչն իր առաջավոր մանկավարժական հայացքները փորձել է իրագործել ինչպես իր պրակտիկ մանկավարժական գործունեության ընթացքում, այնպես էլ իր կազմած դասագրքերում և ձեռնարկներում: Աբովյանի գրական ժառանգության մի շատ հետաքրքիր էջ է «Պատմություն Տիգրանի կամ բարոյական խրատներ հայ մանուկների համար» մանկավարժական վեպը, որը նույնպես կարելի է դասել խրատաբանական ժանրի թվին,- նկատում է Ա. Ջրբաշյանը: Դատելով պատկերված միջավայրի բնույթից, հերոսների նկարագրից ու վարքից, «Պատմություն Տիգրանի» վեպը պետք է որ ռուս կամ եվրոպական համապատասխան մանկավարժական գործի ազատ փոխադրությունը լինի: Այստեղ առավել ամբողջական է դրսևորվել Աբովյանի լուսավորական աշխարհայացքը: Նա բնությունը համարում է մարդու դաստիարակության ամենահիմնական դպրոցը, որից կարելի է շատ բան սովորել: Ահա թե ինչու այդ վեպում հանդես եկող ուսուցիչը՝ պարոն Կարապետը և նրա սաները հաճախ են դուրս գալիս զբոսանքի, զբաղվում հողագործությամբ և

[1] Աբովյանի ուսումնառությունը Դորպատում նախատեսված երկու տարվա փոխարեն տևեց հինգուկես տարի, որից չորսը ուսումնական եղան, մեկուկեսը՝ նաև գիտական հետազոտությունների: Դորպատում Աբովյանը ոչ միայն ստեղծագործել է, գրել բանաստեղծություններ, թարգմանություններ արել, այլը պատրաստել է գիտական ուսումնասիրություններ, օրինակ «Գյուղական տների կառուցվածքը», օգնել համալսարանի գիտնական Վիլհելմ Վալտերին գերմաներեն թարգմանելու Մ. Խորենացու «Հայոց պատմություն» գիրքը, շարադրել դորպատյան իր օրագրությունները, ձեռնարկել օտարներին հայերեն սովորեցնելու գործը: Այս ընթացքում Աբովյանը ազատ ունկնդրի կարգավիճակով հաճախել է նաև առանձին հայտնի գիտնականների դասերին, ուսանել Դորպատի ուսուցչական սեմինարիայում՝ հմտանալով դասավանդման մեթոդիկայի մեջ: Տե՛ս Ավագյան Ա., Խաչատուր Աբովյան. կյանքի երեք շրջան, երեք միջավայր, «Հայագիտության հարցեր», թիվ 2, Երևան, 2014, էջ 11:

միաժամանակ ծանոթանում բնության գաղտնիքներին: Այս վեպում որոշակիորեն զգացվում է մարդու բնական դաստիարակության ռուսսոյական հայացքների արձագանքը[2]:

Աբովյանն ինքը բարոյական դաստիարակության ամենաարդյունավետ և կարևոր միջոցներից մեկը համարում էր օրինակը, հատկապես դաստիարակի անձնական օրինակը: Նա հետևորդն է այն գաղափարի, որ ուսուցումը պետք է համապատասխանի երեխայի հոգեկան կարողություններին և ժամանակի պահանջներին: «Պատմություն Տիգրանի կամ բարոյական խրատներ հայ մանուկների համար» մանկավարժական վեպում՝ ուսուցիչ Վահանյանի տպավորիչ օրինակով ցույց է տալիս, թե ինչպիսին է ուզում տեսնել յուրաքանչյուրին, ով կրում է ուսուցիչ «տիտղոսը»:

Բացառիկ է Աբովյանի[3] աշխարհաբար լեզվով գրված առաջին դասագիրքը, որը բոլորովին նոր երևույթ էր նախկին տպագրությունների համեմատ: «Նախաշավիղը» զուգապես և՛ այբբենարան է, և՛ ընթերցարան: Մեծ հումանիստն իր այս դասագրքով ավելի դյուրին էր դարձնում ուսուցման գործընթացը: Երեք մասից կազմված այս դասագիքի հաջորդական էջերը թերթելիս աշակերտը կարող էր տեսնել նախ առաջաբանը, ապա մեսրոպյան տառերի ուսուցման հատվածը, իսկ վերջում ընթերցարանը: Առաջին հայացքից «Նախաշավիղը» շատ սովորական գիրք է այբբենարան՝ իր ընթերցարանով: Եթե նույնիսկ ուրիշ ոչինչ չստեղծեր Աբովյանը, հենց միայն «Նախաշավիղը» բավական կլիներ, որ նրա անունը անմոռաց մնար հայ մանկա-վարժության պատմության մեջ:

---

[2] Ջրբաշյան Ա., Խաչատուր Աբովյանի գրական ժանրերը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1 (67), Երևան 1989թ., էջ 55:

[3] 1914 թ. «Տարազ» շաբաթաթերթում (№1) տպվեց Աբովյանի «Թիֆլիզի հայոց հանգստարանում» երկը, որի մեջ հեղինակը պարզում է ոչ միայն իր և աշակերտների ներքին կապը, այլ և ցույց է տալիս, թե որն է իր մանկավարժության հասարակական և քաղաքական նպատակը: Նա այդտեղ պատմում է իր տասնհինգ տարվա մանկավարժական գործունեության նպատակը. նա ցանկանում է ազգի վերակենդանացման միջոցները իր աշակերտներին սովորեցնել և նրանց սրտի մեջ ուժ դնել, որ այլևս «հասնողը նրանց գլխին չտա»: Ուզում է իր աղքատ հարյուր աշակերտին գյուղերի, քաղաքների լուսավորիչներ դարձնել, որ նրանք գնան ուսուցչից ստացած բարի սերմը ազգի «երեխեքանց սրտում ցանեն»: Այդ նպատակը, եթե իրագործվի, այնուհետև այլ ևս նա մահվանից չի վախենում և կը հա-մարի, որ իր կյանքի մեծ խորհուրդը կատարել վերջացրել է: Տե՛ս Պրոֆ. Ա. Տերտերյան,Աբովյանի ստեղծագործությունը, Երևան,1941, էջ 236:

Դա մի սովորական գիրք չէր, այլ հանդուգն հղացում: Ազգային ինքնաճանաչողության արտահայտություններից լինելով՝ նա եկավ հիմնիվեր շարժելու ժամանակի քարացած միտքը, պահպանողական մանկավարժության սրբանվեր սխոլաստիկան: Աբովյանը խիզախեց հայ երեխաների ձեռքից վերցնել ժամագրքերը, շարականներով և կրոնական տաղերով լի գրաբարալեզու ձեռնարկները, տեղը տալ աշխարհիկ բովանդակությամբ և ժողովրդական լեզվով դասագիրք[4]:

Ամենայն Հայոց Կաթողիկոս (1843-1857 թթ.), ազգային-ազատագրական շարժման գործիչ Ներսես Ե Աշտարակեցին 1848 թվականին Աբովյանին Թիֆլիս է հրահրում պաշտոնավարելու Ներսիսիյան հայկական դպրոցում: Դպրոցների մասի վերատեսչի 1848 թվականի մարտի 11-ի հրամանագրով, համաձայն իր դիմումի, ազատվում է Երևանի գավառական դպրոցի տեսչի պաշտոնից: Տեղի ունեցող իրադարձություններից պարզ է դառնում, որ Աբովյանը ընդունել է կաթողիկոսի առաջարկը:

Աբովյանը[5] ժողովրդի մարդ էր, իր ստեղծագործության ակունքներով ու ոգով սերտորեն կապված ժողովրդի հետ: Նրա մանկավարժական հայացքների հանգամանալից ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա ծանոթ էր առաջավոր մանկավարժական տեսություններին: Աբովյան վարպետը իր բոլոր գործերի մեջ մնում է

---

[4] Աբովյան Խ., Նախաշավիղ, Կրթութեան ի պետս նորավարժից, Առաջաբանով և ծանոթություններով Ռ. Զարյանի, Երևան, 1940, էջ 5:

[5] Աբովյանի մանկավարժական հյացքները չի կարելի հասկանալ, բոլորովին կտրված այնպիսի գործիչներից, ինչպիսիք են Հ. Ալամդարյանը, Մ. Թաղիադյանը, որոնք ոչ միայն Աբովյանի սոսկական ժամանակակիցներն էին, այլև որոնց հետ Աբովյանը այս կամ այն չափով, երբեմն էլ շատ մոտիկից շփվել է իր ուսման ու գործունեության տարբեր շրջաններում: Աբովյանը Ալամդարյանի աշակերտն է եղել Ներսիսյան դպրոցում և միշտ ջերմությամբ և խոր երախտագիտության զգացմունքով է հիշել այն բարերար ազդեցությունը, որ Ալամդարյանն ունեցել է նրա և ուրիշների վրա: Կասկածից վեր է, որ Ալամդարյանը զգալի դեր է խաղացել ոչ միայն Աբովյանի հասարակական-քաղաքական հայացքների ձևավորման գործում. ավելի պակաս չէ Ալամդարյանի դերը այն բանում, որ նա Աբովյանին (թեկուզ և պրակտիկ ձևով, որպես Ներսիսյան դպրոցի ղեկավարն ու ուսուցիչը) հաղորդակից է դարձել նոր մանկավարժական գաղափարներին. չէ՞ որ Աբովյանը առաջին անգամ համեմատաբար ժամանակակից դպրոցի հանդիպում է ի դեմս Ներսիսյան ուսումնարանի, որի ոգին այդ ժամանակ Ալամդարյանն էր, իր «Ցուցակ պարտաւորութեանց վարժապետաց»-ով և համեմատաբար նոր մանկավարժական-դիդակտիկական հայցքներով ու պրակտիկայով: Տե՛ս Սանթրոսյան Մ., Հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խաչատուր Աբովյան, Երևան, 1953, էջ 294:

Աբովյան,- նկատում է պրոֆ. Ա. Տերտերյանը: Ուզում եք, աշուղ անվանեցեք, ուզում եք՝ չաշուղ-Աբովյանը դա է: Այդպիսի վարպետ է նաև Հակոբ Պարոնյանը, որ շարունակ շեղումներ է անում (ի հարկե, ավելի փոքր ծավալով, քան Աբովյանը) և ինքն իրեն արդարացնում, թե՝ այդ շեղումները ուրիշի մոտ թերություն են, իսկ իր՝ Պարոնյանի մոտ «թերություն ուղղելու պաշտոն ունի»: Եվ հիրավի. ի՞նչ կստացվի Պարոնյանի երգիծանքից, եթե հանելու լինենք նրա հոյակապ շեղումները[6]:

Հ. Պարոնյանի ատեղծագործության մի փոքրիկ մասն է կազմում մանկագրությունը: 1876-1877 թթ. երգիծաբանն հրատարակում է «Թատրոն բարեկամ մանկանց» վերնագրով պարբերականը: Նկարագարդ ու հաջողված տպագրությամբ այդ պարբերականը ըստ էության առաջին մանկական հրատարակությունն էր հայ իրականության մեջ: Կասկածից վեր է, որ երգիծաբանության ազգային դպրոցի հիմնադրի խմբագրած մանկական գրվածքներն վարպետությամբ է շարադրված և համապատասխանում է երեխաների հոգեբանությանն ու տարիքային առանձնահատկություններին: Պարոնյանն անկաշկանդ ու անկեղծ էր փոքրիկ ընթերցող բարեկամների հետ զրույցում:

«Բարեկամ մանկանց»-ում զետեղված նյութերն ունեն բավականին լայն շառավիղ,- նկատում է գրականագետ Ալ. Մակարյանը,- և դրանք կարելի է բաժանել թեմատիկ բազմաթիվ խմբերի՝ ճանաչողական (աշխարհագրություն, պատմություն, ազգագրություն, մարդաբանություն, կենդանաբանություն, նշանավոր մարդկանց մասին զվարճալի զրույցներ...), բարոյախրատական (ազնվության դրվատում, գո-ղության, ծնողներին չլսելու պատճառով փորձանքների մեջ հայտնվելու, ագահության, կամ որկրամոլության և նման խնդիրների մասին պատմող հեքիաթներ, զրույցներ ու առակներ), կրթական (գրավոր արտահայտվելիս միտքը գրագետ շարադրելու, օտար կամ բարբառային բառերի փոխարեն հայերեն համարժեքներ օգտագործելու, ընթերցասիրության և այլնի խորհուրդներ), քաղաքավարական (վարքի, խոսվածքի ու տարբեր իրավիճակներում պահվածքի բազմաթիվ կանոններ)[7] :

Մի պահ երկմտում ենք, թե ինչպես կարող էր հայտնի երգիծաբանն այսքան ու այսպես ներթափանցել մանկան ներաշխարհ՝ նրանց հոգեբանությունն ընկալելու համար: Չնայած իր սուղ պայմաններին՝

[6] Տերտերյան Ա., Աբովյանի ստեղծագործությունը, Երևան, 1941, էջ 380:

[7] Այդ մասին մանրամասն տե՛ս Մակարյան Ալ., Կրկին Պարոնյանի հետ, (նոր ընթերցումներ), Երևան, 2018, էջ 273 :

«Թատրոն բարեկամ մանկանց» երկշաբաթաթերթի տպագրության ընթացքում խմբագիրը նյութական շահ չէր հետապնդում:

Հարկավ, փոքրիկ ընթերցողի համակրանքին արժանի լինելու համար պետք է կարողանալ այնպես գրել, որ հետաքրքրական լինի նաև մեծերին: Պարոնյանի հրատարակած բոլոր մանկական պատմությունների առանցքային նպատակը «փոքրիկ տղայոց» դաստիարակությունն էր, որը դարձյալ վկայում է նրա մեծությունը որպես մանկավարժի:

Անսահման գեղեցիկ ու բովանդակալից է Պարոնյանի տված նկարագրությունը Մասիս սարի առիթով: Տպագրված պատմություններին համապատասխան նկարների առկայությունն ոչ միայն ավելանում էր երկշաբաթաթերթի գրավչությունը, այլև ամբողջացնում ու լիարժեք էր դարձնում նկարագրությունը: «Ճանբորդը երբոր Թիֆլիզեն կամ Երևանէն ճանբայ ելնէ դեպի Էջմիածին երթալու համար՝ Արարատայ անհուն դաշտը կը բացուի իր առջևը. այս ընդարձակ դաշտին Հիւսիսակողմը՝ հորիզոնին վրայ սև կէտն երթալով մեծնալէն ետքը՝ ուրիշ պզտիկ կէտ մը կսկսի տեսնուիլ՝ որ իբրև Մասիսի ձագը վեր կը բարձրանայ իր քովիկը. Այս պզտիկ կէտն ալ ահագին լեռ մէ, ինտոր պատկերին մեջ կը տեսնուի, և կըսուի փոքր Մասիս»[8]: Հայաստանի խորհրդանիշ հանդիսացող բիբլիական լեռան նկարագրությունը շարունակելով՝ անդրադառնում է Նոյ Նահապետի և Նոյան տապանի պատմությանը: Պարոնյանը[9] ջանք ու եռանդ չէր խնայում

[8] «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, թիվ 11, էջ 81:

[9] Գիտակցելով հայ մանուկների հայեցի դաստիարակության կարևորությունը և դրան ծառայող մանկական «ճիշտ» գրականության բացակայությունը՝ Հ. Պարոնյանը 1876-ին սկսում է «Թատրոն. բարեկամ մանկանց» երկշաբաթաթերթի հրատարակությունը՝ որպես հակակշիռ ամերիկյան միսիոներների «Ավետաբեր տղայոց համար» պարբերականի (1872-1915), որ միտված էր հայ երեխաների շրջանում բողոքականություն տարածելուն՝ փորձելով նրբորեն ձևել նրանց դեռևս

պարբերականի էջերը լցնել այնպիսի պատմական հարուստ իրադարձություններով, որոնք երեխաների մոտ հայրենասիրական զգացում կառաջացնեին: Քանզի, բարոյական դաստիարակության առաջնային խնդիրը նա համարում էր հայրենասիրությունը: Ուշադիր ընթերցողը անմիջապես կնկատի, որ «Քաղաքավարության վնասների» հեղինակն իր «Թատրոն մանկանցում» քաղաքավարության կանոնների քարոզիչ է:

Երգիծաբանը ծանրակշիռ քայլ կատարեց՝ իրապես շարունակելով Աբովյանին, իսկ անընդհատ սահող ժամանակը չկարողացավ քողարկել նրանց գործունեությունը: Քննության առնելով երկու հեղինակների՝ խ. Աբովյանի և Հ. Պարոնյանի մանկավարժական հայցքները, կարելի է եզրակացնել, որ մանկավարժը երեխաներին դաստիարակում է ոչ միայն համոզման, խոսքի, խրատի միջոցով, այլև սեփական գործով ու անձնական օրինակով, վերաբերմունքով ու վարվելակերպով: Ուսուցման օգտավետության համար գոհացուցիչ չէ միայն նրա մատչելիությունը: Անշուշտ, դպրոց հաճախող երեխաների ուսուցման ու դաստիարակության արդյունավետությունն նախ և առաջ կախված է ուսուցչից, նրա մանկավարժական վարպետությունից:

փխրուն և չկազմավորված հոգեբանությունը: Զգալով «Ավետաբեր»-ի, իր խոսքով՝ «աղետաբեր» լինելը հայ սերունդների համար և այլ պարբերականի ստեղծման կենսական անհրաժեշտությունը՝ երգիծաբանը մի կողմ է դնում կոմիզմն ու իր հասցեատերը դարձնում հայ երեխային՝ շեշտադրելով հատկապես դաստիարակչական երակը: Փաստորեն պարբերականը դառնում է երեխաների համար ոչ միայն ժամանցի աղբյուր, այլև ճիշտ դաստիարակության միջոց, և դրանում ներառված գործերում կարևորվում է ոչ այնքան գեղարվեստական կողմը, որքան ճիշտ բարոյախոսությունը, թե ինչ են այդ նյութից սովորում երեխաները: Տե՛ս «Վէմ» համահայկական հանդես, Մակարյան Ալ., Սողոյան Ա., Հանրահայտ մի հեքիաթի փոխադրության հետքերով, Երևան, 2017, էջ 131-132:

Լ. Հարությունյան

Դաստիարակության դիտանկյունները Խաչատուր Աբովյանի և Հակոբ Պարոնյանի մանկավարժական Երկերում

Ամփոփում

Աբովյանը ոչ միայն XIX դարի առաջին կեսի հայ գրականության ամենախոշոր դեմքն է, այլև նաև մեծ մանկավարժ ու լուսավորիչ: Կարևոր նշանակություն է տվել բարոյական դաստիարակությանը, բայց ամենևին չի անտեսել աշխատանքային և ֆիզիկական դաստիարակության անհրաժեշտությանը երեխայի անձի զարգացման գործում: Աբովյանից հետո մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության հաջորդ ջատագովը Հ. Պարոնյանն է: Հանրությանը հայտնի երգիծաբանի ջանքերով 1876-1878 թթ. լույս է տեսել «Թատրոն բարեկամ մանկանց» վերնագրով պարբերականը, որի նպատակը երեխաների ճշմարիտ դաստիարակությունն էր: Ըստ էության այն կարելի է համարել առաջին մանկական հրատարակությունը հայ իրականության մեջ:

Л. Арутюнян

Перспективы воспитания в педагогических работах Хачатура Абовяня и Акопа Пароняна

Резюме

Абовян не только является крупнейшим представителем армянской литературы первой половины XIX века, но еще и великим педагогом и просветителем. Он придавал большое значение нравственному воспитанию и считал необходимым трудовое и физическое воспитание в развитие детской личности. После Абовяна следующим апологетом в сфере образования и воспитания молодого поколения является А. Паронян. Благодаря усилиям этого известного сатирика в 1876-1878-ом годах было опубликовано периодическое издание под названием «Театр дружных ребят», цель которого – истинное воспитание детей. И, в принципе, его можно назвать первым детским изданием в армянской действительности.

L. Harutyunyan

The viewpoints on upbringing in Khachatur Abovyan's and Hakob Paronyan's pedagogical works

Summary

Abovyan was not only the greatest representative of Armenian literature in the first half of the XIX century, but also a great teacher and an illuminator. He attached importance to the moral upbringing, without disregarding the necessity

of labour and physical education in child's personal development process. The next advocate of the education and upbringing of the young generation after Abovyan is H. Paronyan. With the efforts of the well known satirist "Theatre, children's friend" magazine was published in 1876-1878. The aim is children's true upbringing. In essence, it can be considered to be the first publication for children in Armenian reality.